Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2021 թվականի ապրիլի 14-ի N 9 - 1 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Դ. Գալոյան
14 ապրիլի 2021 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգի ընդունման հիմքերն են «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՊՏՀ) կանոնադրությունը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և ատեստավորման կանոնակարգը» և այլ ներքին իրավական ակտերը:

2. Սույն կանոնակարգը սահմանում է ՀՊՏՀ-ի ակադեմիական (գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական) կազմի մրցութային ընտրության սկզբունքները, պաշտոնների նկարագրությունը և տեղակալման կարգն ու պայմանները:

3. ՀՊՏՀ-ի ակադեմիական կազմը ձևավորվում է թափուր պաշտոնների մրցութային ընտրությամբ (տեղակալման առաջնահերթությամբ) և սույն կարգով նախատեսված դեպքերում՝ ռեկտորի հրամանով 1-ից մինչև 3 տարի ժամկետով նշանակմամբ:

4. ՀՊՏՀ-ի ակադեմիական կազմի պաշտոնների տեղակալումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով, բաց մրցութային ընտրության հիման վրա 3-ից մինչև 5 տարի (ըստ ատեստավորման գնահատման միավորի) ժամկետով: Ակադեմիական կազմի անդամի գործունեության արդյունքների գնահատման հիման վրա, նրա հետ աշխատանքային հարաբերությունները կարող են շարունակվել 3 տարի ժամկետով՝ առանց մրցութային ընտրության:

5. ՀՊՏՀ-ի գիտական և վարչական կազմի անդամների համար տեղակալումն իրականացվում է 1 ուսումնական տարով՝ մինչև 0,5 դրույքաչափով, համատեղությամբ:

6. Ռեկտորը ՀՊՏՀ-ի ակադեմիական կազմի պաշտոններում, տվյալ պաշտոնին հավակնորդի համապատասխանության դեպքում (սույն կանոնակարգի 14-րդ կետ), առանց մրցույթի հրամանագրման իրավունք ունի՝

ա) ամբիոնում ազատ հաստիքի (0,25 դրույքաչափից ոչ պակաս) առկայության դեպքում՝ 1 ուսումնական տարի ժամկետով, իսկ ՀՊՏՀ-ի ակադեմիական կազմի անդամին՝ 1 տարի ժամկետով և տարեկան երկարաձգման իրավունքով,

բ) ամբիոնում թափուր դասաժամերի (180 ժամը չգերազանցող) առկայության դեպքում՝ դասախոսական փաստացի աշխատանքի ժամկետով, ժամային դրույքաչափի վարձատրությամբ:

7. 70 տարին լրացած անձը բուհում ակադեմիական կազմի թափուր պաշտոնների տեղակալման համար անցկացվող մրցութային ընտրությանը չի մասնակցում: Այդ անձի հետ բուհի ռեկտորը, ամբիոնի վարիչի առաջարկությամբ, կարող է կնքել ոչ լրիվ բեռնվածությամբ աշխատանքային պայմանագիր 1 տարի ժամկետով՝ տարեկան երկարաձգման իրավունքով:

II. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ

8. ՀՊՏՀ-ի ակադեմիական կազմն ընդգրկում է հետևյալ պաշտոնները՝ պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ասիստենտ:

9. **Պրոֆեսորի** պաշտոն կարող են զբաղեցնել այն անձինք, ովքեր համապատասխան մասնագիտությամբ ունեն գիտությունների դոկտորի կամ թեկնածուի (PhD) գիտական աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում, կամ գիտությունների դոկտորի կամ թեկնածուի (PhD) գիտական աստիճան և հրատարակված առնվազն 20 գիտական աշխատանք (այդ թվում 4-ը ազդեցության գործակից ունեցող ամսագրերում), համահեղինակ են (կամ հեղինակ են) դասագրքի կամ ուսումնական ձեռնարկի, կամ մենագրության, ունեն 15 տարվա գիտմանկավարժական ստաժ:

10. **Դոցենտի** պաշտոն կարող են զբաղեցնել այն անձինք, ովքեր համապատասխան մասնագիտությամբ ունեն գիտությունների դոկտորի կամ թեկնածուի (PhD) գիտական աստիճան և դոցենտի գիտական կոչում, կամ գիտությունների դոկտորի կամ թեկնածուի (PhD) գիտական աստիճան և հրատարակված առնվազն 10 գիտական աշխատանք (այդ թվում 2-ը ազդեցության գործակից ունեցող ամսագրերում), համահեղինակ են (կամ հեղինակ են) դասագրքի կամ ուսումնական ձեռնարկի, ունեն առնվազն 10 տարվա գիտամանկավարժական ստաժ:

11. **Ավագ դասախոսի** պաշտոն կարող են զբաղեցնել այն անձինք, ովքեր համապատասխան մասնագիտությամբ ունեն գիտությունների թեկնածուի (PhD)

գիտական աստիճան, առնվազն 5 տարվա գիտամանկավարժական ստաժ, ունեն հրատարակված առնվազն 5 գիտական աշխատանք, համահեղինակ են (կամ հեղինակ են) դասագրքի կամ ուսումնական ձեռնարկի կամ դասախոսությունների տեքստի կամ մենագրության կամ տվյալ մասնագիտությամբ դիպլոմավորված մասնագետ են, կամ ունեն մագիստրոսի որակավորման աստիճան և առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ:

12. **Դասախոսի** պաշտոն կարող են զբաղեցնել այն անձինք, ովքեր համապատասխան մասնագիտությամբ ունեն գիտությունների թեկնածուի (PhD) գիտական աստիճան կամ ավարտել են ասպիրանտուրան (հանձնել են որակավորման քննությունները, կամ կուտակել են հետազոտողի կրթական ծրագրով 175 կրեդիտ), ունեն հրատարակված առնվազն 3 գիտական աշխատանք, կամ տվյալ մասնագիտությամբ դիպլոմավորված մասնագետ են, կամ ունեն մագիստրոսի որակավորման աստիճան և առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ:

13. **Ասիստենտի** պաշտոն կարող են զբաղեցնել այն անձինք, ովքեր տվյալ մասնագիտությամբ կամ դիպլոմավորված մասնագետ են, կամ ունեն մագիստրոսի որակավորման աստիճան:

III. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

14. Ակադեմիական կազմի պաշտոնների հավակնորդի տեղակալման չափանիշներն են՝

ա) բարձրագույն և (կամ) հետբուհական մասնագիտական կրթության որակավորումը,

բ) գիտական աստիճանը (գիտական կոչումը՝ առկայության դեպքում),

գ) ուսումնական, գիտահետազոտական, ուսումնամեթոդական գործունեության արդյունքները, տպագրված գիտական աշխատանքները,

դ) գիտամանկավարժական աշխատանքի ստաժը,

ե) ատեստավորման (վերապատրաստման, որակավորման բարձրացման) փաստաթուղթը,

զ) ՀՊՏՀ-ում առնվազն մեկ կիսամյակ աշխատած հավակնորդի դեպքում՝ մանկավարժական գործունեության գնահատման ուսանողական հարցումների արդյունքները:

15. Ըստ ակադեմիական կազմի պաշտոնների սահմանվում են ուսումնական, գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության հետևյալ բնագավառները.

ա) **Պրոֆեսորի** համար՝ դասախոսությունների, գործնական (սեմինար) պարապմունքների վարում, գիտամեթոդական սեմինարների անցկացում, ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների ղեկավարում, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների ղեկավարում, մագիստրոսական և բակալավրական դասընթացների հիմնում և կազմակերպում, մագիստրոսական և բակալավրական կրթական ծրագրերի ղեկավարում, ամբիոնում հետազոտական ծրագրի, խմբի, լաբորատորիայի ղեկավարում, հետազոտական աշխատանքների կազմակերպում և իրականացում, մասնակցություն ծրագրային, մեթոդական և մշտական հանձնախմբերի, խորհուրդների, խորհրդատվական հանձնախմբերի աշխատանքներին:

բ) **Դոցենտի** համար՝ դասախոսությունների, գործնական (սեմինար) պարապմունքների վարում, լաբորատոր պարապմունքների անցկացում, գիտամեթոդական սեմինարների անցկացում, ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների ղեկավարում (սահմանված թույլտվության առկայության պարագայում), մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների ղեկավարում, մագիստրոսական և բակալավրական դասընթացների հիմնում և կազմակերպում, գիտամանկավարժական և գիտահետազոտական փարձառությունների ղեկավարում, մագիստրոսական և բակալավրական կրթական ծրագրերի ղեկավարում, ամբիոնում հետազոտական ծրագրի, խմբի, լաբորատորիայի ղեկավարում, հետազոտական աշխատանքների իրականացում, մասնակցություն

ծրագրային, մեթոդական և մշտական հանձնախմբերի, խորհուրդների, խորհրդատվական հանձնախմբերի աշխատանքներին:

գ) **Ավագ դասախոսի** համար՝ դասախոսությունների, գործնական (սեմինար) պարապմունքների վարում, լաբորատոր պարապմունքների անցկացում, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների ղեկավարում, գիտամանկավարժական և գիտահետազոտական փարձառությունների ղեկավարում, հետազոտական աշխատանքների իրականացում, մասնակցություն խորհրդատվական հանձնախմբերի աշխատանքներին:

դ) **Դասախոսի** համար՝ դասախոսությունների, գործնական (սեմինար) և լաբորատոր պարապմունքների վարում, ավարտական աշխատանքների ղեկավարում, փորձառությունների ղեկավարում, խորհրդատվությունների անցկացում, մասնակցություն ամբիոնի հետազոտական աշխատանքներին:

ե) **Ասիստենտի** համար՝ գործնական (սեմինար) և լաբորատոր պարապմունքների վարում, փորձառությունների ղեկավարում, մասնակցություն ամբիոնի հետազոտական աշխատանքներին:

IV. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

16. ՀՊՏՀ-ի ակադեմիական կազմի ձևավորումն իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ՝

ա) թափուր պաշտոնների բաց մրցութային ընտրություն,

բ) սույն կարգով նախատեսված դեպքերում՝ պաշտոններում նշանակում:

17. Թափուր պաշտոնների տեղակալման կարգով ակադեմիական կազմի համալրումն ամբիոններում իրականացվում է ներքոհիշյալ դեպքերում՝

ա) տարեկան ուսումնական բեռնվածության երաշխավորված կայուն աճի,

բ) դասավանդողի տարիքային կենսաթոշակի անցնելու և նրա աշխատանքային պայմանագրի լուծման,

գ) դասավանդողի առողջական վիճակի կամ այլ պատճառներով ակադեմիական գործունեության վաղաժամ դադարեցման,

դ) աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտից հետո այն չերկարաձգելու, պայմանագիրը չվերակնքելու:

18. Հաստիքների վերացման դեպքերում (ուսումնական բեռնվածության 0,25 դրույքաչափից պակաս դասաժամ, ֆակուլտետի և (կամ) ամբիոնի լուծարում, աշխատանքի ծավալների նվազման և աշխատանքի կազմակերպման այլ էական պայմանների փոփոխություն) գործատուն առաջարկում է փոփոխված պայմաններով աշխատանքային պայմանագրի կնքում, որի վերաբերյալ աշխատողի անհամաձայնությունը գործատուին իրավունք է տալիս լուծել աշխատանքային պայմանագիրը՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ

19. ՀՊՏՀ-ում սահմանված ակադեմիական կազմի թափուր պաշտոնների մրցութային ընտրությամբ տեղակալման համար հանրապետական մամուլում, տարին առնվազն մեկ անգամ, տրվում է հայտարարություն, որում նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները և դիմումների ներկայացման ժամկետը (հայտարարության հրապարակումից՝ 30 օր):

20. Պաշտոնի հավակնորդները նշված ժամկետում համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժին են ներկայացնում.

1) դիմում ռեկտորին,

2) կադրերի հաշվառման անհատական թերթիկ,

3) գիտական (որակավորման) աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները (առկայության դեպքում),

4) հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների ցուցակը,

5) ինքնակենսագրություն,

6) ատեստավորման փաստաթուղթ,

7) աշխատանքային գրքույկի պատճենը:

21. Հավակնորդի գործը չի ընդունվում, եթե առկա չեն պահանջվող և պատշաճ փաստաթղթերը և (կամ) չի պահպանվել ներկայացման ժամկետը:

Հավակնորդի դիմումը ռեկտորի կողմից մերժվում է, եթե նրա որակավորումը չի բավարարում մրցույթի պայմաններին, կամ չի համապատասխանում ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը:

22. Մրցույթին մասնակցելու իրավունք ստացած հավակնորդ(ներ)ի դիմում(ներ)ը քննարկվում է(են) համապատասխան ամբիոնի նիստում:

Հավակնորդի վերաբերյալ կարծիքի և քվեարկության (փակ գաղտնի կամ բաց՝ ըստ ամբիոնի որոշման) արդյունքների արձանագրությունն ամբիոնը ներկայացնում է բուհի գիտական քարտուղարին՝ բուհի մրցութային հանձնաժողովին ուղարկելու և նրա գրավոր եզրակացությունը ստանալու համար:

23. Մրցութային հանձնաժողովը անդամների առնվազն 2/3-ի մասնակցությամբ ուսումնասիրում է մրցույթի մասնակիցների փաստաթղթերն ու ներկայացրած այլ նյութերը և տալիս եզրակացություն:

Գիտական քարտուղարը ասիստենտի, դասախոսի, ավագ դասախոսի, դոցենտի պաշտոնի հավակնորդների գործերը (նրանց վերաբերյալ կարծիքների և քվեարկության արդյունքների արձանագրությունը) ներկայացնում է համապատասխան ֆակուլտետի գիտական խորհրդին, իսկ պրոֆեսորի պաշտոնի հավակնորդի գործը՝ բուհի գիտական խորհրդին:

24. Գիտական խորհուրդը անդամների առնվազն 2/3-ի մասնակցությամբ կազմակերպում է փակ գաղտնի քվեարկություն:

Մրցութային հանձնաժողովի նախագահը (իսկ ֆակուլտետի գիտական խորհրդում՝ հանձնաժողովի անդամներից մեկը) ներկայացնում է պաշտոնի հավակնորդ(ներ)ի տվյալները, ամբիոնի և մրցութային հանձնաժողովի եզրակացությունները:

Քննարկումներից և ելույթներից հետո ինքնաբացարկ չհայտարարած հավակնորդների ազգանունները, անունները գիտական խորհրդի որոշմամբ գրանցվում են քվեաթերթիկներում:

25. Գիտական խորհրդի անդամների առաջարկով, փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար, գիտական խորհրդի որոշմամբ, խորհրդի անդամներից ընտրվում է 3 հոգուց ոչ պակաս (կենտ թվով) հաշվիչ հանձնաժողով, որի անդամ չեն կարող լինել հավակնորդները: Հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ:

26. Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

27. Մեկ հավակնորդի դեպքում քվեաթերթիկում պետք է նշվեն թեկնածուի ազգանունը, անունը, «կողմ» և «դեմ» բառերը:

28. Մեկից ավելի հավակնորդների դեպքում՝ այբբենական կարգով պետք է նշվեն նրանց ազգանունները, անունները և ազատ վանդակ՝ քվեարկության համար: Քվեաթերթիկի վերջին տողում նշվում է «բոլորին դեմ եմ» արտահայտությունը:

29. Միևնույն ամբիոնի պրոֆեսորի, դոցենտի, ավագ դասախոսի, դասախոսի կամ ասիստենտի՝ մեկից ավելի թափուր պաշտոնների մրցույթի հայտարարությամբ սահմանված տեղերի (թվաքանակի) ընտրության քվեաթերթիկում այբբենական կարգով պետք է նշվեն հավակնորդների ազգանունները, անունները և ազատ վանդակ՝ քվեարկության համար, ինչպես նաև «կողմ ձայն կարող են ստանալ հավակնորդներից ոչ ավելի, քան (նշվում է թափուր հաստիքների քանակը)», իսկ վերջին տողում՝ «բոլորին դեմ եմ» արտահայտությունները:

30. Գիտական խորհրդի կազմի յուրաքանչյուր անդամ ստանում է մեկ քվեաթերթիկ՝ ստորագրելով քվեարկողների ցուցակում: Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները, հաշվառում անվավեր քվեաթերթիկները և կազմում արձանագրություն:

Վավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում՝

ա) մեկ թեկնածուի դեպքում թողնված է «կողմ» կամ «դեմ» բառը,

բ) քվեարկված է առավելագույնը ամբիոնի թափուր պաշտոնատեղերի թվով թեկնածուների օգտին կամ «բոլորին դեմ եմ»:

Անվավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում՝

ա) քվեարկված է ամբիոնի առավելագույն թափուր պաշտոնատեղերի թվից ավելի հավակնորդների օգտին,

բ) քվեաթերթիկում առկա են չնախատեսված նշումներ՝ ընդգծումներ և ավելորդ նշաններ (հաշվիչ հանձնաժողովի որոշմամբ):

31. Ընտրված է համարվում գիտական խորհրդի նիստին մասնակից անդամների առավելագույն ձայներ ստացած (բայց ոչ պակաս քան 50% + 1) հավակնորդը, որի վերաբերյալ ընդունվում է որոշում:

32. Մեկից ավելի հավակնորդների պարագայում, գիտական խորհրդի նիստին մասնակից անդամների 50% + 1, սակայն հավասար ձայներ ստացած հավակնորդների համար նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն թափուր մնացած պաշտոնների համար:

Կրկնակի քվեարկության ժամանակ ընտրված է համարվում խորհրդի նիստին մասնակից անդամների առավելագույն ձայներ ստացած (բայց ոչ պակաս քան 50% + 1) հավակնորդը, որի վերաբերյալ ընդունվում է որոշում:

33. Կրկնակի քվեարկությամբ 50% + 1, սակայն հավասար ձայներ ստացած հավակնորդներին, ըստ թափուր պաշտոնների թվաքանակի, ռեկտորը հրամանագրում է հայտարարված պաշտոնում հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ՝

ա) գիտական աստիճանի առկայություն,

բ) գիտամանկավարժական ստաժ (ըստ առավելագույն տևողության):

34. Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է սույն կանոնակարգին համապատասխան:

35. Ռեկտորը, հիմք ընդունելով բուհի և ֆակուլտետի գիտական խորհուրդների որոշումները, ընտրված անձին հրամանագրում է հայտարարված պաշտոնում:

36. Մրցույթի արդյունքները չեղյալ են հայտարարվում միայն սույն կանոնակարգը խախտելու դեպքում:

37. Արգելվում է հղի, նախածննդյան ու հետծննդյան արձակուրդ տրամադրված կանանց և մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվողներին նշված շարժառիթներով մրցութային ցուցակում չընդգրկելը կամ մրցույթով անցնելուց հետո նրանց հետ պայմանագիր չկնքելը:

38. Ամբիոնի բաժանման և ամբիոնների միավորման ժամանակ արգելվում է դասախոսների ժամկետից շուտ մրցույթի անցկացումը:

VI. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

39. Սույն կարգի 7-րդ կետի նախատեսված կարգավորումները չեն տարածվում այն անձանց վրա, որոնք ընտրվել (նշանակվել) են մինչև սույն կարգի ուժի մեջ մտնելը: Նրանք պաշտոնավարում են մինչև պայմանագրի ժամկետի լրանալը:

40. Սույն կանոնակարգը գործողության մեջ է դրվում 2021 թվականի ապրիլի 14-ից, բացառությամբ 14-րդ կետի «ե» ենթակետի և 20-րդ կետի 6-րդ ենթակետի, որոնք ուժի մեջ կմտնեն 2022 թվականի հունվարի 1-ից: